# ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

**Մարգահովիտ համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ**

| Համայնքը | Միջոցառման անվանումը | Օրը | Ժամը | Անցկացման վայրը |
|---|---|---|---|---|
| **Մարգահովիտ** | Ավագանու հերթական նիստ | 27.05.2020թ. | 15:00 | **Մարգահովիտի** համայնքապետարանի նիստերի դահլիճում (գ. Մարգահովիտ, 2 փողոց 23) |

**ՆԱԽԱԳԻԾ 16-Ա**

---

ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

Օրակարգ

Մարգահովիտ համայնքի ավագանու 2020թ.-ի մայիսի 27-ի

հերթական նիստի.

1. Մարգահովիտ համայնքիավագանու 2020թ. մայիսի 27-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Ս. Անանյան

2. ՀՀ Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի ավագանու անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին

զեկ. Ա. Խառատյան

3. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին.

զեկ. Ս. Անանյան

4. Գույքագրման փաստաթղթերում փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Ա. Խառատյան

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման առաջին եռամսյակի եռամսյակային հաշվետվության հաղորդումը հաստատելու մասին

զեկ. Գ. Կոծինյան

6. ՀՀԼոռու մարզի Մարգահովիտ համայնքի 2020թ-ի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Գ. Կոծինյան

7. Համայնքի Մշակույթի տան շենքից սենյակներից վարձակալությամբ տրամադրելու մասին.

զեկ. Ս. Անանյան

8. Համայնքային սեփականություն հանդիսացող նախկին մանկապարտեզին պատկանող կաթսայատան շենքը վարձակալության տրամադրելու մասին

զեկ. Ս. Անանյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

**ՆԱԽԱԳԻԾ 17-Ա**

---

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Լոռու մարզպետի 19.03.2020թ-ի թիվ 01/107.4.1/02587-2020 գրությունը, Մարգահովիտ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Մարգահովիտ համայնքի ավագանու անդամներ Մանանա Դավթյանի և Անդրանիկ Պոստոլակյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնել՝ 2019թ-ի ընթացքում ավագանու նիստերի ավելի քան կեսից անհարգելի բացակայելու պատճառով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

**ՆԱԽԱԳԻԾ 18-Ա**

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆՀԱՊԱՀՈՎ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով տացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները.

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի,
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին.
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի ավագանու

2020 թվականի մայիսի 27-ի  N 18-Ա որոշման նախագծի

**ՑՈՒՑԱԿ ՀՀ  ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ**

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ**

1. Լյովա Վլադիմիրի Խառատյան – երեսուն հազար դրամ /սոց. օգնություն/,
2. Ազնիվ Արամայիսի Կիրակոսյան –  երեսուն հազար դրամ /սոց. օգնություն/,
3. Տիգրան Ալբերտի Լորիկյան – երեսուն հազար դրամ /սոց. օգնություն/,
4. Սուսաննա Լիպարիտի Պոստոլակյան – քսան հազար դրամ /սոց. օգնություն/,
5. Լուսինե Սեյրանի Սաֆարյան – երեսունհինգ հազար դրամ/սոց. օգնություն/,
6. Լեյլի Արամայիսի Զոհրաբյան – երեսունհինգ հազար դրամ /սոց. օգնություն/,
7. Սուրեն Լենդրուշի Բոջուկյան – երեսունհինգ հազար դրամ /սոց. օգնություն/,
8. Մատինյան Նվարդ Արամի – քսան հազար դրամ /սոց. օգնություն/:

Ընդամենը – 235.000 /երկու հարյուր երեսունհինգ հազար/  դրամ:

ՄԱՐԳԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ____________________ ԱՎԱԳ ԽԱՌԱՏՅԱՆ

(ստորագրություն)

**ՆԱԽԱԳԻԾ 19-Ա**

---

ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով.

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

Մարգահովիտ համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարել փոփոխություններ և ավելացնել հետևյալ գույքը.

1. Համակարգիչ i3-9100 / asus h310 /ssd 120 gb /hdd 1 tb /ram 8gb / – 198.000 (մեկ հարյուր իննսունութ հազար) ՀՀ դրամ,
2. Մոնիտոր LG 22MK430H-B 22" - 1 հատ - 66.000 (վաթսունվեց հազար) ՀՀ դրամ,
3. Սնուցող սարք FSP FP650 - 1 հատ - 23.000 (քսաներեք հազար) ՀՀ դրամ,
4. Հեռախոս - 5900 (հինգ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ,
5. Փոցխ - 4 հատ - 300.000 ՀՀ դրամ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

**ՆԱԽԱԳԻԾ 20-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ
ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020
ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ
ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի՝ Մարգահովիտ համայնքի ավագանին.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման ընթացքի մասին առաջին եռամսյակի եռամսյակային հաշվետվության հաղորդումը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

**ՆԱԽԱԳԻԾ 21-Ն**

---

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ
ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, ,,Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ Մարգահովիտ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ու Մ Է

Մարգահովիտ համայնքի 2020թ-ի բյուջեում կատարել փոփոխություններ՝ համաձայն 1-5 հավելվածների:

1. Եկամուտների գծով.
Ընդամենը - 117355.1 /հարյուր տասյոթ միլիոն երեք հարյուր հիսունհինգ հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ

այդ թվում՝

· վարչական բյուջեի մասով - 117355.1 /հարյուր տասյոթ միլիոն երեք հարյուր հիսունհինգ հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ

. ֆոնդային բյուջեի մասով - 0.0 /զրո/ ՀՀ դրամ

2. Ծախսերի գծով
Ընդամենը - 168269,5 /մեկ հարյուր վաթսունութ միլիոն երկու հարյուր վաթսունինը հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ

այդ թվում՝

· վարչական բյուջեի մասով - 117355.1 /հարյուր տասյոթ միլիոն երեք հարյուր հիսունհինգ հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ

. ֆոնդային բյուջեի մասով - 50914.4 /հիսուն միլիոն ինը հարյուր տասնչորս հազար չորս հարյուր/ դրամ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

**ՆԱԽԱԳԻԾ 22-Ա**

---

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՇԵՆՔԻՑ
ՍԵՆՅԱԿՆԵՐԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի.

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել.

1. Վարձակալությամբ տրամադրվող համայնքային սեփականություն հանդիսացող Մշակույթի տան շենքի չօգտագործվող սենյակների 1 ք.մ. համար նախնական վարձավճարը 100 դրամ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

**ՆԱԽԱԳԻԾ 23-Ա**

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ՄԱՐԳԱՀՈՎԻՏԻ ՆԱԽԿԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ
ՉԳՈՐԾՈՂ ԿԱԹՍԱՅԱՏԱՆ ՇԵՆՔԸ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի բնակիչ Վարդան Ասքանազի Ղումաշյանի դիմումը.

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Մարգահովիտ համայնքի սեփականություն համարվող Մարգահովիտի նախկին մանկապարտեզի շենքի չգործող կաթսայատան 06-070-0122-0114-0002 ծածկագրի շենքը՝ 92ք.մ. տրամադրել վարձակալությամբ 11.800 դրամ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**